

կայ կազմել մի բիւրօ նիւթեր մատակարարելու մտքով :

Ե. Նկատարներ. սալ Միւթեան միջոցներէն 1) 1,000 Փր. նպաստ Pro Armenia ին, որ քաջարար ծառայում է հայոց գատին և 2) 500 Փր. մարդ ուղարկելու թիւրքաց—Հայաստան տեղեկութիւններ հաղորդելու համար :

Չեռնարկելով կարգադիր Բանձնաժողովի հետ միասին այս որոշումները իրագործման, լիազօր կօմէտէն խնդրում է ձեռք, ընկերներ, արծարծել նրանց կարեւորութիւնը բոլոր շրջաններում և նպաստել գործին—Թէ գրամով և թէ անձնական աշակցութեամբ :

Ընկերական բարեւեներով :

Լիազօր Կօմիտէ

Ժրնէլ, Յուլիս

ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ

Բ

Յուլիս 2 ին, առաւել, ժամը 7 ին քաղաքի միացած կը մտնեմ Սօֆիայէ Սամօլիթ գացող կառախուժքը որ կը մեկնի սրարշու պայքաններու գողը :

Առտուան մշուշը թոյլ ու թափանցիկ, կը ծածանի դաշտերուն վրայ, երկինքը արեւոտ է, բայց միշտ ամպի ջրէլաններ հոս հոն կը շրջուին և յամրօքէն կը տարածուին :

Կը մտնենք լեռանց շղթաներու մէջ, անվերջ թիւնէլներ իրարու կը յաջորդէին, փոփոխակի լոյսէն խաւար եւ խաւարէն լոյս կը փոխուէինք, կը մտնենք, կեղծներ լեռներու տակ, կը կախուինք ձորերու վրայ եւ վերջապէս խաղաղութեամբ կը հասնինք բաց դաշտերը :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿԸ ԽՂՃԱՆ ՈՉ ԿԸ ՍԻՆԵՆ

X

(Շար. ևախորդ քիւիկ)

Դուրս ելաւ մազոտ ու բաց գլուխով մարդ մը, հաստ մօլտովանի մորթով, Ան բիրտ ուժով Մաքէտօնսքի ձեռքը բռնեց ու ըսաւ .

— Հէյ, գո՛ղ, ինչու տախտակը կը փրցնես : Մաքէտօնսքին առանց անոր մտիկ ընելու կը շարունակէր տախտակը հանելու, որ առջի քաշիկէն իր տեղէն ելած էր :

Անձանթը ուժով հրեց Մաքէտօնսքին .

Մաքէտօնսքին առանց տախտակը թողնելու բուժանագիտի սպասուական նայուածք մը նետեց . . . ցածէն ըսաւ .

- Տէ՛, կորու՛ւէ :
- Չգէ՛ ատ, ո՞վ ես գու՛ն :
- Կորու՛ւէ՛, կրկնեց Մաքէտօնսքին, տախտակը տանիքէն վար առնելով :

Անձանթը տախտակը յափշտակեց

Անընդհատօրէն տեղացող անձրեւներու գործած աւերուճիկը կրեւան ամէն կողմ, ապին եղիպտացորենի ընդարձակ արտեր Եանթրայի սանձարձակ յորդումներու տակ փճացած են, անդին ամբողջ բանջարանոցները ջուրերու տակ թաղուած են :

Այլազան ու փոփոխ տեսարաններ իրարու կը յաջորդեն, հետաքրքիր են մանաւանդ պուլկար գեղջուկ կիներն ու աղջիկները իրենց ազգային տարազին մէջ, որոնց ամէն կայարան կը հանդիպիս, որ կուզան պուլկ կամ ուտելիք ծախելու :

Կին մը ամենէն աւելի մեր հետաքրքրութիւնը ու ծիծաղը կը չարթէ : Տնական ամբողջ կարգ ու սարք մը ունի վրան : Կանակը կախ օրրան մը շինած՝ ուր գետեղուած է իր մանկիկը, մէջքին խոթած խոշոր ճախարակեայ իւ մը, ձեռքը բռնած սակառ մը պտուղ եւ տեղեւներու մէջ ծրարուած պանիր, թէ՛ կաշխատի եւ թէ՛ առուտուր կընէ : Բայց մանկիկը կըսկսի յանկարծ լալ, մայրը հանդարտեցնելու համար գանձի, կսկսի ոտքերուն վրայ դառնալ, վախով, օրօրոցը կը չարթի, կերերայ, բայց մանկիկը կը շարունակէ իր լացը, վախին կը յաջորդեն մայրական զրգուանք ու փաղաքուշ իօսքեր ու յետոյ կամիթ ու յանդիմանութիւն, բայց եւ ոչ մէկ օգուտ, եւ յուսահատ մայրը կատարուի հեռանալ :

Ժամը 3 ին մտնելը Բլէվէնի բարձունքները կերեւան, ինչպէս նաեւ յաղթական կոթողը, որ հոն վերը գցուած է, ճամբորդները իրարու կը ցցունեն այդ յաղթական յիշատակը, հոն էր որ Օսման փայա Չախալի պարտութեամբ մը անձնատուր եղաւ յաղթականին, եւ անկէ անդին Ռուսերը արագօրէն տիրացան Թուրքիոյ սրտին :

Բլէվէնի մէջ կիմանանք որ Սամօլիթի ճամբան աւրուած է, եւ հարկ

ու դայրոյթով գոչեց :

— Չը պիտի թող տամ, աւազակ : — Գնա խրճիթդ մտիւր, ըսաւ Մաքէտօնսքին շունջը կտրած եւ անոր կուրծքին հարուած մը իջեցնելով :

— Պահա՛կ, պահա՛կ, կը պոտար բուժանագիտի եւ տախտակը ամուր կը սեղմըր :

Մթութեան մէջ այս աղաղակը շատ հեռուն տարածուեցաւ :

Մաքէտօնսքին շուարած նայեցաւ— Եղբայր վճարեմ, առ աւ երկու ֆրանքը, ըսաւ եւ փարաները անոր տուաւ :

— Պահա՛կ, աւա՛զակներ, իր ըտլոր ձօնովը կը պոտար յամառ բուժանագիտի միեւնոյն ատեն իր երկաթեայ ձեռքերով տախտակը քաշելով : Մաքէտօնսքին իսկոյն զգաց, որ զօրաւոր հակառակորդի մը հետ է գործը եւ թէ իր գրութիւնը շատ վտանգաւոր կրնար ըլլալ. առանց տախտակի կարելիութիւն չկար այդ անդունդը անցնելու, եւ բոմանական ափր պիտի մնար, գուցէ կառավարութեան ձեռքը : Այսպէս, տախտակ մը կրնար ամբողջ ձեռնարկ մը վիժեցնել, Յանդեմութեամբ գործելու ժամանակն էր, Բոլոր ուժով տախտակը բռնեց, ինչպէս որ Բոմանագիտի ալ կը բռնէր, լարեց իր ամբողջ ուժը, խոր շունջ մը քաշեց եւ պէն շարտեց իր հակառակորդը եւ ա-

կըլլայ երկու ժամու շափ սպասել Ռուսները մեկնող կառախուժքին :

Ժամը 6 ին ճամբայ կիլիկիք, հիւսա ըրլորովին, հարթ, ընդարձակ դաշտերու մէջէն կանցնինք :

Ուղեկիցներս են այս անգամ երեք ուսանողուհիներ եւ երկու ուսանողներ զուարթ, կայտառ ու թարմ էակներ, որոնք կը շաղակրստեն, կը քրքջան ու կը կատակեն :

Կամաց կամաց մուտք կը կոխէ, երկինքը պայծառ է, ուղեկիցներս առատ ճաշ մը ընելէ յետոյ կսկսին երգել :

Պուլկարական ժողովրդային միլիտոյ մըն է երգածին, մեյամազձիկ ու անուշ, սէրն է որ կերգուի հայրենիքի զինուոր, երիտասարդ յեղափոխականի մը սէրն է ան, որ աւելի վեհ, աւելի մարտը սիրոյ մը առջեւ տեղի կուտայ : Յեղափոխականը միտա բարովը կըսէ իր սիրականին եւ կերթայ նետուելու յեղափոխութեան յորձանքին մէջ :

Երգը կերկնայ, կը հասնինք Լէվսկի կայարանը, պուլկար յեղափոխութեան պատմական այս վայրերուն մէջ, գիշերուան զով ստուերներուն մէջ, երիտասարդ պուլկարներու մեյանայ այս երգը անհունօրէն կազդէ վրաս, մեր ու պուլկար կեանքերու վայրկեանական բաղդատութիւն մը կը ընկնէ հոգիս, անցուցած են անոնք իրենց արեւնոտ շրջանը ու հիւսա ազատութեան գէթ բարոյական առաւելութիւնները կը ըրոյնիննն առատօրէն :

Ու կրթնած պատուհանին, ականջներս երգի ելեւէջներուն տուած, սիրտս նախանձէ տարբեր ուժգին զգացումի մը տակ անզնաւորուած աչքերս կը բարձրացնեմ վեր, երկինքին խոր, Ու հոն պլպլուտն առող մը դեղնորակ սաքի մը պէս, որ կարծես մեր գնացքին կը հետեւի, բաներ մը կը փոփսայ ականջիս :

— Հայրենիքի ազատութիւնը հայրենիքի մէջ միայն կերաղուի եւ կիրագործուի :

Նոր վրան ինկաւ : Բոմանագիտի դոգահար, յամառ, պատկած, տախտակը ամուր իր կուրծքին սեղմած էր, եւ կիտառ աղաղակներ կը թողուր, Առդին Մաքէտօնսքին, առ անխելք դիմադրութեանէն կատարած՝ ոտքի ելլալով, տախտակի մէկ ծայրէն բռնեց եւ ոտքովը բոմանագիտին փորին կոխելով՝ արագութեամբ ոլորելով տախտակը անոր ձեռքերէն քաշեց, յետոյ վեր վերցուց եւ տախտակը շրջելով անոր գլխուն զարկաւ ուժգնօրէն :

Բոմանագիտի ալ եւս չը շարժեցաւ :

Արագութեամբ իր բիւրը ու տախտակը արմուկին աւել անհեղով, նա Դանուբի չառած առուին յով վերադարձաւ աչքերովը, շափեց ու բիրտով սատոյցի պիտութիւնը փորձեց եւ զգուշութեամբ անդունդի երկու եզերքին վրայ տախտակը նետեց :

Աս յանկարծական կտուրջը մէկ ու կէս թիգ լայնքով, հազիւ սատոյցի ծայրերուն կը գպչէր : Ձնջին պատահար մը, փոքրիկ ձկնով մը կրնար զայն սահեցնել :

Մաքէտօնսքին, որ տարիներով չէր խաչակնքած, հեծակ բերանը բացած շարաքաստիկ վիճին առաջ, ակամայ ձեռքը վերցուց ու խաչ հանեց : Մտակալի կամուրջին վրայ կոխեց եւ յաջողութեամբ միւս կողմը

ժամը 10ը անցած կը հասնինք Թրնովայի կայարանը, հոս հարկ կըլլայ երկու երկար ժամեր սպասել, ժամը 12ին կը մտնանք նոր կառախուժքի մէջ :

Գիւղացիները ամբողջ բռնած են նստարանները եւ անհողութեամբ երկնցած անոնց վրայ, վերջին ծայր գարշահոտութիւն մը կը տիրէ եւ անվերջ խոլտուք, հազիւ անկիւն մը կը գտնեմ սեղմուելու, ու երկար սատանուճիկէն յոյնած, ուժասպառ կսկսիմ մտածել :

Առտուան շողերը կը սթափեցնեն զիս, հիւսա Դանուբի բարձրաւանդակին վրայ կը գտնուինք, կառախուժքը հեղահեղ կուժուցնէ իր գնացքը ու շրջափայլը հետզհետէ կը ծանոթանայ ինձի :

Կը մտնենք Ռուսներու սահմանները, կը քերենք Գուլէի եզերքէն, փոքրիկ Լոմն ալ իր աւերուճիկը գործած է, ամբողջ այգիները ջուրերու տակ թաղուած են :

Ժամը 6 1/2ին կը հասնինք Ռուսներու կայարանը :

Վէլ-ՄԱԺԱՆ, Ռուսներու 4 յուլիս

ՀԻՆԳԱՍՍԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՈՒ

ՏԻԼԻՊԵՒ ԱՂ ՔԱՏԱՆՍՍ ՄԱՍՆԱԽԱՄԻՆԵ

1901 ՓԵՏՐՈՒՐ ԻԷՆ ՄԻՆՁԵՒ 4 ՅՈՒԼԻՍ 1901

Աղք. մասնախումբս ներկայիս իր հինգ ամուսնու հայու եկելոք ներկայացնելով պարտք կը զգայ նաեւ իր խորին շնորհակալութիւնը յայտնել Յիլիպիկ հայ հասարակութեան նախագահու ազգայիններու հետ Տօքլի. Պ. Օրմանեանի, որ երկու տարիէ ի վեր մասնախումբիս կողմէ յանձնարարուած աղքատ հիւանդները ձրիւսար կը դարմանէ գովելի զոհողութիւնով մը :

ՄՈՒՏՔ
Նախորդ հաշիւէն պատրաստ գրամ 165. 12 1/2

անցաւ : Յետոյ, 1876 ին ալ այսպէս ըրին Պէնքօվսքի եւ Վօլով, երբ, սառած Դանուբի մէջ, իրենց զէմը ելաւ գետ մը, Պէքէթի առջեւը :

Մաքէտօնսքին իր քաղաքի արտիստները կը մտնեար, եւ պահականոցներու փոքրիկ լուսամտնայէն ելած լոյսերը արդէն յայտնի կը տեսնէր : Ան ուղիղ կերթօք զէպի այն կէտը, որ երկու պահականոցներու հետաւորութիւնը երկու հաւատարմասի կը բաժնէր, գիտէր, որ հոն հեղեղները փոսեր բացած են, եւ կը մտածէր այդ փոսը մտնելու :

Հիմակ Մաքէտօնսքի կուրծքը անբացատրելի զգացումներով կ'ալեկոտուէր, կզգար որ սրջափ բաղձացեալ արտիստ կը մտնեար, այնչափ դժբաղք միջադէպերու, վտանգներու ու անակնկալներու մէջ կը սուզուէր : Կ'զգար զայս եւ անոր համար կը շտապէր :

Բարեբաղդարար գիշերուան յառաջանալով մտայն խաւարը կը թանձրանար բայց անոր աչքը մթութեան հետ ընտելացած էր, կը շարունակէր պայծառ կերպով որոշել այնտեղի բոլոր կարեւոր իրերը, պահականոցները, գետափի անհաւասար շեղադիժերը, սեւացած փոսը, իսկ ետեւը հեռուն՝ ձուրձովան, որ ալօտ լուսաւոր

Շարժական գանձա- նակէն	388. 82 1/2
Չատկուան առթիւ 74 աղջային- ներէ հանգանակուած	227—
Չատկուան առթիւ եկեղեցիին մէջ շրջ. պնակէն	8. 35
Եկեղեցիին կանանց կողմի պնա- կէն եւ գանձանակէն	3. 15
Սովեալներու ինպատ ներկա- յացուած թատրոնի հասոյթին միա- ցորդը նուիրուած	3. 80
Ա. Գ. Թոքաթիւնէ երկու անգամ նուէր	20. 10
Ա. Կարապետ Էղնաեանէ նուէր	20 —
Սարիմ Քէշիշեանէ գանձուած	8. —
	<hr/>
	839. 35

ԵԼՔ

Տրուած շարժական նպատ- ներ	27205
Չատկուան առթիւ 35 ընտանիք- ներու բաշխուած	101. —
Գարտ բազմաթիւ ընտանիք մը Պոլիս զրկելու համար	120. —
Ա. Թոքաթիւնի զեղորէից համար վճարուած	70. 20
Շարժէ շարժ գանձելու պայմա- նաւ Ս. Քէշիշեանէ	9. 50
Գարուկ Փափագեանի 5 ը. գերակ Յարութիւն անուն սզգայինի մը նպատ 5 ը.	10. —
Գ. Թիւթիւնեան անուն անձի մը 5 ը. Մշեցի պանդուխտի մը 10 ը. կե- ւարացի ազգի մը 12 ը. ճամբու ծախք	27. —
Երկու ազգատ ընտանիքի կտրքի դրամ	2. —
Ազգատ ննջեալի մը համար ծախսուած	1. 20
Յովհաննէս Ռուսոյ քրեանի բացա- ռիկ նպատ	2. —
Ազգատ կնոջ մը համար հեռագրի դրամ	0. 50
Պուրկաղի Թաղ. քաջուած հեռագրի մը եւ նամակ	0. 70
Երկու պանդուխտ աղքատ ազգ.	

բութեամբ, կախարական քաղաքի մը կը նմանէր :

Վերջապէս ափին մտնելու, ու փո- սը սպրդեցու եւ հոն կեցաւ ականջ գնելու : Ամէն ինչ խոր քնոյ մէջ էր : պահակարաններն ալ չէին տեսներ : ձրկու ցած փլած եղերքներ երկու կողմէն կ'երեւային : Դէպի հիւսիս փոսի մթութիւնն էր, իսկ դէպի հա- հարու ջինջ անյայտութիւն մը : մոխրագոյն, անորոշ ու հեռաւոր, երազի պէս :

Մաքեթոնքի իր մորիէ մուշտա- կի տակը խոսնեց եւ սէզովէրը հա- նեց ու աջ ձեռքը պահեց. բիրը ձա- խէն անցուց, զգոյշ ու կամաց քայ- լերով սկսաւ յառաջանալ, փոսի մէ- ջէն որ կը բարձրանար եւ իր զլու- խը եղերքներէն երեւան կ'ըլաւ :

Իսկոյն մայր եւ որ, ոչ այնքան հեռուն, յիսուն քայլ անդին, մարդու պէս բան մը, սեւի մէջ փաթաթուած կը շարժէր : նա ուշի ուշով դիտեց, մարդը կը շարժէր եւ դէպի իրեն կուգար, եւ իրեն այնպէս երեւաւ թէ, այդ անձանքին արմուկին տակ բան մը կը տեսնար, հասնո- րէն հրացան պիտի ըլլար :

Ճանչցաւ իր յօսքը կեցող պահակ զինուորն էր : Մաքեթոնքի մէկէն ձեռքաւ ափին կպաւ, բիրը սիզմին մէջ խրուելով,

Սօֆիայի պուլի. հիւանդանոցը զրկե- լու ճամբու ծախք	21. —
Նախորդ գանձանակը պատցնողին . Չատկուան առթիւ նուէր	10 —
Հարիւր քսան լէվը նարոյթոնի վե- րածելու ածիօ	0. 70
Դրօշմաթուղթի . կն. քամովի . պան- ձանակի նարոգութեան 80 սնդ. վարչ. համար տոմարի . ընկալագրի 4. 80	
գանձանակը պատցնողին	70. 10
Գանձապետին քով պատ- րաստ	115. 80
	<hr/>
	839. 35

Ի դիմաց Աղք. մասնախմբի Ատենապետ Ատենազպիւր Բ. Չօրեան Կ. Մ. Աւսարձեան (Կնիք) Յիլիպէ 5 Յուլիս 1901

ԹԻՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Այս վերնագրին տակ Պէլճիա- կան «Մաթէն» թերթը իր ստ շահեկան ու հետաքրքիր խմբագ- րական մը գրած է . որուն կա- րեւոր մասերը ամփոփելով՝ կը ներկայացնենք «Շարժու մի» ըն- թերցողներուն :

Սուլթանին կառավարութիւնը, կըսէ «Մաթէն», կը շարունակէ աշխարհը իր վրայ խօսեցնել ալ կարծի եղածին չափ իր մասին նուազ նպատաւոր կերպով : Ան կը թողու որ իր օտար երկիրնե- րու մէջ ունեցած ներկայացու- ցիչները անօթութենէ մեռնին : Անոնցմէ մէկը, ալ ուրիշ ճար չի գտնելով, անօթութենէ չի ճա- թելու համար, յանձն առած է վեհափառ տիրոջը հաշտոյն լրտե- սութիւն ընել :

Վերջերս ալ Պալթիկ չեւք գի-

տեր ինչու զրկուած թուրք նա- մը կէս ճամբան սովի ենթարկ- ուեցաւ . ի զուր նաւին հարամա- նատարը նմակ նամակի վրայ կը գրէ Պոլսոյ Մալիքէին, զրամ հաս- ցնելու համար : Պատասխան անգամ չէին տար : Հրամանատարը յա- կընէր որ իր նաւուն առջեւ ըր- կար բազուկ մը շինել տար, նման հոռոմէական կոյմերուն . բայց ձեռքով մը վերջաւորուած՝ որուն վրայ սա վերտառութիւնը գըտ- նուէր. «Ողորմեցէ՛ք, Սուլթանին խեղճ նաւն է» :

Երկրին ապահովակա՞ն վիճակն ալ ներթականէն վար չի մնար . Մակեդոնիոյ մէջ, մարդիկը կը ջարդեն, կը կողպանեն, կայրեն ու կը քանդեն . նոյնիսկ տղոց չեն խնայեր . անոնց ականջները կը կտրեն, կիներն ու երիտա- սարդ աղջիկները կը բռնաբա- րեն :

Գալով հայերուն, գանոնք ար- գէն նոր ջարդերու համար բա- ւական հասունցած կը համարեն, եւ արգէն քիչ քիչ ջարդը կը վերսկսի : Սիսդէմը նոյն է . երբ Համիտ կը տեսնէ որ Հայերը նո- րէն քիչ շատ պարարտացեր են եւ կրնան իրենց խեղճուկ գոյու- թիւնը ապահովել, անոնց վրայ կարճակէ իր զօրքերը եւ անոնց օգնական՝ կատաղի քիւրտերը :

Չենք գիտեր թէ՞ որու վրայ կարճէ պարմանալ, հայերուն՝ որոնք կը յամուին ապրիլ ու ա- ճիլ իրենց արիւնով ողորտած հո- յի մը վրայ, թէ՛ իրենց դա- հիճներուն անպառելի վայրա- գութեան՝ որով չեն կրնար յաջո- յիլ ցեղ մը բնաջինջ ընելու :

տանի, Բայց Մաքեթոնքին այդ գրութեան մէջ երկար մնաց, ականջ- ները լարած, աչքերը չորս լացած եւ առանց շունջ առնելու, Ոչ մէկ ազմուկ կրկնուեցաւ, նա իր ստամ անգամները շարժելու ճիգ մը ըրաւ, Չգաց, որ կոնակը սաս ու ոտքերը քար կարած էին :

— Ա՛հ, ա՛ն էր պակաս . . . ստամ եմ չնջացնա, եւ կամացուկ մը եր- կու ձեռքերուն կրթնելով նստաւ, զգուշութեամբ վեր ելաւ վիզը եր- կընցուց ու դուրսը փոսի ծայրէն դուրս հանեց :

Շուրջը նորէն ամայի ու մեռելա- կան էր :

Սողոսկելով ձորակին միւս ծայ- րէն դուրս ելաւ . զաշտը ոտք կոխեց եւ ըլլակէ մը թռաւ անցաւ :

Գանի մը վայրկեան փախչելէ յե- տոյ, փոքրիկ ձորի մը մէջ գտաւ ինքզինքը, որ սովորաբար Գանուրի Գետափեայ եղերքներու անհարթու- թիւնները կը կազմեն . քիչիկ մը շունջ առնելու համար հոն կանգ ա- սաւ : Չգաց որ ոտքերը տաքցած էին եւ իր ուզութիւնը որոշելու համար քննական նայուածք մը նետեց . յե- տոյ գարձեալ շարունակեց ճամբան, երբ որ ըլլակի մը պագած բարձ- րացաւ, հեռուն արեւմուտքի մէջ ա- նորոշ լոյսեր նշմարեց, որ հոն յուսի

Ամէն օր այս Արեւելքէն մեղի հասնող լուրերը, երբեմն սարսափե- լի, չարաշուք ու անհեթեթ, միշտ ծայրատ բայց աչիողորմ, վերջերս միթիթարական բուն մը հազորդեցին մեղի : Կերեւայ թէ Երլազի մէջ իսկ բարձրաստի- ճան անձնաւորութիւնները ժողով կազմեր են Սուլթանը գահընկէց ընելու համար : Ժողովին կը նա- խագահէր Թահսին պէյ . Համիտի առաջին քարտուղարը : Այդ ժողո- վին մէջ քններ են թէ՛ արգեօք Համիտի մտաւոր վիճակը կը նե- րէ՞ որ տակաւին շարունակէ իր իշխանութիւնը առանց պետու- թեան շահերը վտանգելու : Միա- ձայնութեամբ, ժողովականները որոշեր են Սուլթանը գահընկէց ընելու եւ անոր տեղ վերստին Մուրատ Ե.ը նստեցնելու : Այս պարագային Համիտի երրորդ եղբայրը, Ռէշատ պէյ Քէմալէտ- տին, պէտք է իր իրաւունքնե- րէն հրաժարի : Դժբաղդաբար, մատուցելու պատեհաբար իր դերը կատարած է, եւ Սուլթանը դաւադրութեան տեղեկանալով՝ ձեռքապալել տուած է ժողովական- ներէն մէկ քանին, միայն մէկ քանին՝ որովհետեւ միւսները այնքան բարձր դիրք մը կը գրաւեն սր . չէ համարձակած անոնց եւս դպչիլ :

Թրքական գործերու ամենէն լաւ տեղեկ անձեր շատ հաւատ չեն ուզեր ընծայել այս եղբու- թեան, բայց սա ստոյգ է որ, դա- ւադրութիւնը յայտնուած իրիկու- նըն իսկ, Երլազի մէջ հրգեհ կըլ- լար, եւ այդ հրգեհը՝ Սուլթանին հարեմներէն մէկուն ձեռքով կատարուած՝ շատ ազետաւոր պի- տի ըլլար Սուլթանին համար :

մէջ Ռուսոյութի տեղը կը ցուցնէին : Մաքեթոնքի դէպի հարաւ արեւ- մուտք գարկաւ, կիսարտրակ շրջանով մը քաղաքին մօտե- նալու, եւ պահականոցներու մօտա- ւորութենէն խուսափելու համար :

Ռուսոյութի մէջ, լոյսերը կը պլպլա- յին ու կը մեռնէին երբ Մաքեթոնք- քին քաղաքին մօտեցաւ, կայարա- նին զուգահեռական ճամբով սկսաւ քալել . իր առջեւը քաղաք տանող խճուղիին ճեղքակ գիծը կը ձգուէր :

Հիմակ վտանգը աւելի մեծ էր, պատաւ թօնքայի տուէր կը մտնէր երեք ճամբով : Շատ հաւանական էր որ գեռ գիշերային պահակները կը չըջէին եւ իրեն կրնային հանդիպիլ . քիչ մը մտածեց եւ իսկոյն դէպի Գանուք ուղղուեցաւ, ձեռքաւ ու ծալուեցաւ եւ անձայն ու արագ սկաւ վազիլ, նա գիշերը քաղաքներու հեռաւոր ծայրե- րը թափառող գայլի մը կը նմանէր, իսկոյն իր առջեւը Գանուքը ձեռքը- ցաւ, ձիւնի բարակ քօղով ծածկուած : Չատիվայրի մը իջաւ եւ ձեռքով, գետափին երկարութեամբ սկսաւ քալել :

Թարգ. Պ. ՍԻՐԻՄՃԵԱՆ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Տէր Օհան աւագ քահանայ Մանգակունի լուրջ ջանքեր կը նէ Վիէնայի մէջ ազգ. մատուռ մը բանալու, արդէն քանի մը բարեսէր ազգայիններ գլխաւորապէս Ռուսահայ ծանօթ բարերար Աղա Դաւիթ Իւզրաշեան, խրախոյս տուած են իրեն:

Անցած տարի ալ, երբ սոյն քահանան պատարագ մատուցանելու համար տեղ մը վարձելու ջանքեր կընէր, առջի բերան շատեր ծաղրեցին զինքը և իր ձեռնարկը: Սակայն անվճար քահանան իրեն աջակիցներ ճարեց. նպատակը իրագործեց և կառավարութեան առջև ալ Վիէնայի մէջ հայ ժողովուրդի մը զոյսութիւնը պաշտօնապէս ծանօթացուց:

— Մոսկուա, Յունիս 24ի կիրակին, պատարագէն յետոյ, եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր կերպով հոգեհանգիստ կատարուեց է ազգանդաւոր ողբերգու Պետրոս Աղամեանի մահուան տանձեակի առիթով: Հոգեհանգիստի ժամանակ Պ. Ղուկաս Քեմնչէճի իր ճառին մէջ ազգու խօսքերով յայտնեց է Աղամեանի գործունէութեան նշանակութիւնը հայկական բեմի համար:

— Պ. Ռէթէոս Պէրպէրեանի նախկին աշակերտներուն նախաձեռնութեամբ յառաջիկայ հոկտեմբեր ամսին պիտի տօնուի Պէրպէրեանի մանկավարժական գործունէութեան քսանհինգամեակը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սուլթանը հրամայեց է իր Լոնտօնի դեսպանին անգլիացի միբրոպագէտ մը վարձել, որ Հնդկաստանի մէջ ժանտախտը ուսումնասիրած ըլլայ: Թէեւ ժանտախտի նոր դէպք չէ պատահած, բայց հին վարակիւնեալներէն մին մեռեր է:

Արեւելեան երկաթուղիներու ընկերութիւնը կաշխատի ստանալու Պուլկարիոյ գրած քարանձախներու բարձու մը և աւելի չափաւոր միջոցներու կերտումը, որոնք Վիէնայի և Տրէզտաի համաժողովներուն մէջ նշանակուած են:

— Եպարքոսական շրջաբերական մըն էր որ Իսլամ ընտանիքներու կարգիւէր իշենց սպոց կրթութեան համար երոպացի դաստիարակներ վարձել: Նմանապէս արգիլուեց է Իսլամ ընտանիքներու իրենց սպասարկու տիկիներու կամ օրիորդներ պահել, կամ անոնց ընկերակցութեամբ պոռոյտի կամ գնումի

ելլել: Եպարքոսական շրջաբերականին մէջ խօսուած է եւրոպացի դաստիարակներ կամ սպասարկու կիներ ունենալու վնասակար հետեւանքներուն վրայ: Յայտնի է որ կուզեն հարէմներուն արգիլել Երոպացւոց հետամէն յարաբերութիւն, որպէս զի Իսլամ երիտասարդութիւնը ազատական գաղափարներով չի տոգորուին:

Կրտսի թէ այս որոշումը այն տոնն տրուեց է, երբ հաստատուեց է որ, Երլազի մէջ, Սուլթանին նշանակեալին կից, վերջերս պատահած հրդեհը գործն էր հարեմի սպասուհիներէն չէր քէլ կնոջ մը:

Ստիկանութիւնը հրահանգ ստացած է հսկել այս որոշումին գործագրութեան: Նմանապէս հրահանգ տրուած է ոստիկանութեան արգիլելու թուրք կիներու Վոսփօրի մէջ թիւ վարել, մասնաւորապէս կէօք-Սուր գետակին վրայ, որովհետեւ «երկրին սովորութեանց հակառակ է» եղեր:

— Խտիվին մեկնման առթիւ Պոլսէն կը հեռագրեն թէ՛ երկու անձնաւորութիւններ Խտիվին թրէնով մեկնած են, պաշտօն ունենալով անոր շարժումներուն ու գործերուն հսկելու: Կրտսի թէ Խտիվը խոստացեր է Սուլթանին հաշտեցնել իր աներձագը Տամատ Մահմուտ փաշան: Խտիվին Պոլիս գտնուած ատենը իր վրայ ամենախիստ հրակոյտութիւն ի գործ դրեր են և բազմաթիւ թուրք անձնաւորութիւններ որոնք անոր այցելութեան գացած էին, մասնաւորապէս երկու գնդապետներ, ձերբակալուեցին: Խտիվը շատ դժգոհ մեկնեց է:

— Սուլթանին աներձագը Թէրիս փաշա, Վիէնայի ճամբով Հոմմ զրկուեց է, Սուլթանին նուիրած գեղեցիկ ձիերը Խտալիոյ թագաւորին յանձնելու համար:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Երոպական, մանաւանդ աստրիական բազմաթիւ թերթեր խմբագրականներ կը նուիրեն Պուլկարիոյ իշխանին թագաւոր ըլլալու հաւանական խնդրին վրայ: «Նայէ Պրայէ Բրէսէ» կըսէ թէ Պուլկարիա առայժմ թագաւորութեան տիտղոսը տալու չիցանկար Թէրաինանտ իշխանին, որովհետեւ այս տիտղոսը հիմա ընդունելով, հրաժարած պիտի ըլլար Մակեդոնիայէն: Պուլկարիոյ և Մակեդոնիոյ թագաւորի տիտղոսը անշուշտ իրեն աւելի հաճելի է, իսկ լոկ Պուլկարիոյ թագաւորի տիտղոսը ոչ այնքան: «Վիէնէր Թալէպատ» կըսէ թէ այն բաժակաճառէն ետքը, որով Պուլկարի մէջ Մ. Ի. Միխայելովիչ

Պուլկարիոյ անկախութեան մասին խօսեցաւ, կարելի է կարծել որ Ռուսիա չի պիտի ընդգիմանայ Պուլկարիոյ թագաւորութեան բարձրանալուն: Աւստրիա եւս հաւանականօրէն արգելք չի հաներ:

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Գոնդ Լամտորֆ Թրանսա ճամբորդութիւնը կարելի է իրրեւ որոշուած նկատել: Ռուս նախարարը պիտի հատուցանէ Տէլքասէի իր պաշտօնակցին այցելութիւնը, Հանրապետութեան նախագահին ներկայանալէ ետքը:

Դեռ յայտնի չէ այս ճամբորդութեան որոշ թուականը, բայց կենթագրուի թէ նիքօլա Զարին արտասահման ճամբորդութեան միջոցին տեղի պիտի ունենայ: Եթէ անակնկալներ չի պատահին, Զարը սեպտեմբերի մէջ պիտի ճամբորդէ:

Հաւանական է որ, Բարիզէ դարձին, Զարը քաղաքավարական այցելութիւններ ընէ Գերմանական խորհրդական Պիւլֆին և Աւստրիոյ արտաքին գործոց նախարար Կլախօֆին:

— Թօլսթօի առողջական վիճակը հեղհեղեղ բարւոքելու վրայ է:

Իր հիւանդութեան միջոցին Թօլսթօյ աշխարհի ամէն կողմէն բազմաթիւ գրութիւններ ստացեր է, որոնց մէջ կայ եղբոր նաև հնդկացի բանաստեղծի մը նամակը:

— Ռուսական Մօզօյա քաղաքին մօտ 15 աւազակներ ապրանք փոխադրող կառախումբի մը վրայ յարձակեցին, որ Մոսկուա կերթար: Կառախումբի պաշտօնեաները և ճամբուն վրայ աշխատող գործաւորները կրցեր են յարձակողները վանել: Որոնց մին ձերբակալուեց է:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Բրէթօրիաէն կը հեռագրեն թէ Բրիւկէրի կիներ, անցեալ շաբաթ մեռել է, 67 տարեկան, երեք օր թոքատապէ սառնապելով: Բրիւկէրի կիներ 50 տարեէ ի վեր ամուսնացած էր եւ միշտ սիրով ու յարգանքով վերաբերուած էր իր ամուսնոյն: Այս մահը թրանսվալի նախագահը շատ պէտի զգացնէ:

— Լօրէնձօ-Մարքէզէն հեռագիր մը կիմացնէ թէ նոր ապստամբութիւն մը ծագեր է Քաբի մէջ և թէ զօրավար Պրէնչ Լօրա Քիչնէրէն օգնական շօրքեր խնդրի է:

— Անգլիական թերթերը, զրիթէ առանց բացառութեան համակրանքով կը խօսին Բրիւկէրի կնոջ վրայ, բայց ի «Տէլի թէ-

լէկրաֆէն և Մորնինկ Բօսթէն» «Թայմզ» կըսէ թէ ամբողջ Անգլիա անկեղծ համակրութիւն մը պիտի զգայ Թրանսվալի նախագահին հանդէպ, իր կրած ընտանեկան վշտին վրայ: «Ոթանտարտ» կըսէ թէ Անգլիոյ համար վեհանձնութեան պակաս մը պիտի ըլլար իր համակրութիւնը մերժել Լահէյի վտարանդի նահապետին:

Պ Ա Բ Ա Ն Ա Ն Ե Ր Կ Ի Ր Ն Ե Ր

«Մաճար Օրձակ» Հունգարական լրագիրը լուր մը հրատարակած է, որ շատ յուզմապատճառեց է: Զինուորական գաշնագրութիւն մը կնքուեց է եղբր Աւստրո-Հունգարիոյ և Ռուսանիոյ միջեւ, Աւստրիոյ ընդհանուր սպայակոյտի պետ, պարոն Պէրի Ռուսանիա վերջին այցելութեան առթիւ:

Այս գաշնագրութեան համեմատ, Ռուսանիա պատերազմի ատեն 290,000 զինուորով բանակ մը պիտի հանէ: Երբ Ռուսիա իր բանակը շարժէ, Ռուսանիա իր բանակին կէսը կալաց-ճաշի զրծին վրայ պիտի պահէ, որպէսզի Օտէսաի և Սիմֆէրօքօյի զինուորական ուժերը ետ մղէ և արգիլէ անոնց միացումը Աւստրիա մտնալու սահմանուած Բիէվի զօրաբանակին հետ: Ռուսանական բանակին մնացորդը Դանուբի վրայ գերք պիտի բռնէ, Պուլկարիոյ դէմ, մինչդեռ Աւստրիական զօրախումբ մը Սերպիոյ դէմ պիտի գործէ:

Հունգարական թերթերը կը պնդէ այս լուրին վաւերականութեան վրայ, աւելցնելով որ գաշնագրը պաշտօնապէս պիտի հրատարակուի Սերպիոյ թագաւորին, Պուլկարիոյ և Մոնթենէկրօի իշխաններուն այցելութեան առթիւ, իրրեւ պատասխան Պալքաններու սլաւական գաշնակցութեան մը ծրագրին:

Ա Ձ Դ

Ռուսանիոյ Քէօսթէնձէ քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ համար կը խնդրուի վկայեալ երաժիշտ դասաւու մը, որ ունենայ ակորձալուր ձայն, պարկեշտ եւ բարի վարք, 25—30 տարեքով, եւ միանգամայն կարող Ազգ. վարժարանի մէջ երկրորդական դասեր աւանդելու:

Գոհացուցիչ ամսական. մանրամասն տեղեկութեանց համար փոփաքող կանխաւ կարող են դիմել հետեւեալ հասցէին:

M. Ilie M. Grigorian Tipographe Roumanie Constanta

Отговорникъ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимностьъ — Вярна.